Հանրապետական

Մանկավարժահոգեբանական

Կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի թիվ 1 միջնակարգ

Թեմա՝ Սառը պատերազմը

Վերապատրաստող, մենթոր՝ Թամարա Իսոյան

Ուսուցիչ՝ Նունուֆար Հովհաննիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….. 3

1. Սառը պատերազմի հասկացությունը և էությունը ……. 7

2. 20-րդ դարի սառը պատերազմը …… 10

3. Սառը պատերազմի արդի դրսևորումները …… 15

Եզրակացություն …….. 18

Օգտագործված գրականության ցանկ……. 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սառը պատերազմը համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձություններից մեկն է: Այն առաջին հերթին քաղաքակրթությունների բախում էր: «Յուրաքանչյուր քաղաքակրթություն իրեն պատկերացնում է աշխարհի ամենակարևոր կենտրոնը և ներկայացնում է մարդկության պատմությունը համապատասխան այդ աշխարհայացքի»[1]: Սառը պատերազմը համաշխարհային աշխարհաքաղաքական, գաղափարական, ռազմական, տնտեսական հակամարտություն էր՝ Խորհրդային Միության, նրա դաշնակից երկրների և Արևմուտքի՝ ԱՄՆ-ի և վերջինիս դաշնակիցների միջև:

Երբ Երկրորդ համաշխարհայինում ի հայտ եկան Գերմանիայի պարտության առաջին նախանշանները, Գեբբելսը գրեց «2000թ.» վերնագրով հոդվածը, որտեղ կանխագուշակում է Արևմուտքի ապագան այն դեպքում, երբ Գերմանիան վայր կդնի իր զենքերը. Խորհրդային Միությունը կգրավի Արևելյան Եվրոպան և կծածկի «երկաթե վարագույրներով»: 1945թ-ին այդտեղ կսկսվեն բռնությունները և բնակչությունը կվերածվի «կենդանի ռոբոտների»: Արտաքին աշխարհից կստանան միայն այն տեղեկատվությունը, որը ձեռնտու կլինի Կրեմլին: Հող կնախապատրաստվի երրորդ համաշխարհային պատերազմի համար, 1940-ական թթ. վերջերին կոմունիստները կգրավեն Մեծ Բրիտանիան, իսկ չորրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ ԱՄՆ-ը[2]: Չափազանցված հեռանկարներով այս ուղերձը չբարելավեց Գերմանիայի դրությունը, սակայն 1945-ից հետո ստիպեց ձեռնարկել միջոցառումներ կոմունիզմի տարածման վերահաս վտանգը կանխելու նպատակով: 1946թ.-ն Ֆուլտոնում (ԱՄՆ, Միսսուրի) Մեծ Բրիտանիայի վարչապետ ՈՒ. Չերչիլի ելույթով (այն է, թե փրկել քրիստոնեական քաղաքակրթությունը կոմունիստական կուսակցություններից) ազդարարվեց Սառը պատերազմի սկիզբը[3]:

ԱՄՆ-ում ԿՀՎ-ն անմիջապես սկսեց հոգեբանական պատերազմի

---

[1] Տե՛ս Самюэль Хантингтон, Столкновение цивилизаций, 1996, էջ 15:
[2] Տե՛ս Речь Йозефа Геббельса "2000 год", http://reich-erwacht.livejournal.com/42712.html
[3] Տե՛ս http://www.coldwar.ru

մարտավարության մշակումը՝ հրավիրելով բարձրորակ մասնագետների գիտական տարբեր բնագավառներից: 1948-ին Ազգային անվտանգության խորհուրդն ընդունեց թիվ 20/1՝ «ԱՄՆ-ի նպատակները ԽՍՀՄ-ի դեմ պատերազմում» հրահանգը, որը բաղկացած էր երկու հիմնական կետերից՝ ա) թուլացնել Մոսկվայի հզորությունն ու հեղինակությունը ռազմական մրցակցության պայքարում, բ) պետական կառուցվածքը ենթարկել արմատական փոփոխությունների գործնականորեն և տեսականորեն և վերափոխել արժեհամակարգը:

Սպիտակ տան հրամանով պատրաստվում էին տպագիր և ռադիոհեռուստատեսային քարոզչական նյութեր, որոնք վառ և արտահայտիչ գովազդում էին ամերիկյան ժողովրդավարական գաղափարները, ազատ բարքերը, կենցաղավարությունը, նույնիսկ մշակույթը՝ հանձին երաժշտության և կինոարվեստի (ջազային պրոպագանդա և «Հոլիվուդ»):

Հակակոմունիստական ռեակցիոն գաղափարները օգտագործվում էին ոչ միայն խորհրդային հասարակության դեմ, այլև ներքաղաքական պայքարի շրջանակում: Սրանով է պայմանավորված մակկարտիզմի՝ մոլի հակասոցիալիստական շարժման առաջացումը սառը պատերազմի տարիներին: Այն ձևավորվեց, երբ Վիսկոնսին նահանգից հանրապետական սենատոր Ջոզեֆ Մակկարտին հայտարարեց, որ ունի երկու հարյուր հինգ կոմունիստներից բաղկացած ցուցակ, ովքեր աշխատում են պետդեպարտամենտում: Ոչ հայտնի սենատորի անունը անմիջապես հայտնվեց վարկանիշային ամսագրերի էջերում, ռադիոյի և հեռուստատեսության եթերում: 1950-ական թվականներին Մակկարտիի նախաձեռնությամբ մշակվեց ծրագիր ռադիոն և հեռուստատեսությունը կոմունիստներից «մաքրելու համար»: «Քառնթր ռեթեք» շաբաթաթերթը դրանք անվանեց «կարմիր ալիքներ»:

Քննադատելով Տրումենի դոկտրինան՝ (Հարրի Տրումենի քաղաքական կուրսը ԽՍՀՄ-ի դեմ) Ջ. Մակկարտին առաջադրում էր «կարմիր վտանգի» դեմ պայքարի իր շահավետ մարտավարությունը և օգտագործում ընտրական գործընթացներում քաղաքական PR-ի համար՝ համագործակցելով ռադիոհեռուստատեսային կորպորացիաների հետ: Դրանցից CBS-ը, մրցակցելով NBS-ի և ABS-ի հետ, ակտիվորեն ընդառաջում էր Մակկարտիին և պաշտպանում ԱՄՆ-ի ագրեսիվ

քաղաքականությունը սոցիալիզմի դեմ: Այն միաժամանակ տեղեկատվություն էր մատակարարում Պենտագոնի ռազմաարդյունաբերական բազային: CBS-ի ռադիոհեռուստատեսային թողարկումների համոզիչ բովանդակությունը անընդհատ ամերիկյան և արտասահմանյան լսարանին ապացուցում էր ռազմատեխնիկական պատրաստվածության անհրաժեշտությունը Մոսկվայի «սպառնալիքը» չեզոքացնելու գործում:

Սառը պատերազմի ծածկագրային «Դրոպշոտ» (drop-կաթիլ, shot-կրակոց) անվանումը վկայում է այն մասին, որ ի տարբերություն Հիտլերի, որը նախատեսում էր կայծակնային արագությամբ պատմության էջից ջնջել ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը այն իրականացնում էր կաթիլ առ կաթիլ՝ հակառակորդին աննկատելիորեն հասցնելով պարտության: Արդեն 90-ականներին ռուսական մամուլը տպագրում էր ամերիկացի գաղափարախոս Ա. Դալլեսի մեջբերումները. «Մարդու ուղեղը և գիտակցությունը ենթակա են փոփոխության: Սերմանելով այնտեղ քաոս՝ մենք կհրամցնենք կեղծ արժեքներ և կստիպենք հավատալ դրանց: Ինչպե՞ս: Մենք կգտնենք մեր գաղափարակիցների, մեր դաշնակիցներին հենց Ռուսաստանում: Դրվագ առ դրվագ կբեմադրվի ամենաբմբոստ ժողովրդի մահվան հիանալի ողբերգությունը, նրա ինքնագիտակցության անխուսափելի և վերջնական մարումը»: ԽՍՀՄ-ի «երկաթե վարագույրները» հետաձգեցին, բայց չկանխեցին փլուզման վտանգը: Դալլեսի ծրագիրը հաջողվեց:

1960-ականներին «Մոնդ» ֆրանսիական թերթին տված հարցազրույցում Կոմկուսի գլխավոր քարտուղար Լ.Ի. Բրեժնևը հաստատեց. «Գաղափարախոսական պայքարը չի կարող վերաճել հոգեբանական պատերազմի, չպետք է օգտագործվի որպես միջոց պետությունների և ժողովուրդների ներքին գործերին միջամտելու համար կամ հանգեցնի քաղաքական և ռազմական առճակատման», բայց միևնույն ժամանակ նկատում է, որ «…ապրում ենք գաղափարական մշտական պատերազմի պայմաններում, որ մեր երկրի դեմ է մղում իմպերիալիստական քարոզչությունը՝ օգտագործելով ամենանրբին եղանակներ ու տեխնիկական հզոր միջոցներ»: Որքան էլ մարքսյան գաղափարախոսները աղաղակեին կապիտալիզմի՝ որպես շահագործող հասարակարգի թերությունների, ախտերի, կոպիտ բարքերի և անհեռանկար ապագայի մասին, 70 տարի գոյատևող վարչահրամայական կարգերի հիմքերը

խարխլվեցին «ազատության» բացականչություններով: Արևմտյան մշակույթի ցածրորակ տարրերը պառակտեցին խորհրդային հասարակության բարոյա-հոգեբանական մթնոլորտը: Գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքական կուրսը (բացախոսություն, մասնավոր սեփականության իրավունք և այլն) բացահայտ զիջողականություն էր Արևմուտքի ճնշումներին: Երբեմնի հզոր արդյունաբերական ամբողջատիրությունը հայտնվեց տնտեսաքաղաքական ճգնաժամի երախում:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխարհում ամբողջապես փոխվեց աշխարհաքաղաքական ուժերի հավասարակշռությունը: Համաշխարհային առաջատար նախկին երկրների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները անցան որակական նոր մակարդակ և սկսեցին զարգանալ տարբեր կերպ:

Ռուսատանի Դաշնության ներկայիս արտաքին քաղաքականությունը ուղղված է աշխարհի գերտերություններ շարքում պահպանելու ՌԴ առաջատար դիրքն ու հեղինակությունը, սակայն, մինչ օրս այն կատարվում է սառը պատերազմի մնացուկների հենքի վրա:

Սառը պատերազմի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն այն բանի համար, որ վերջինիս դասերի և հետևանքների չիմացությունը ավելի բարդ է դարձնում աշխարհում նոր հարաբերությունների կառուցումը, այլև այն պատճառով, որ չհասկանալով հակամարտության պատճառներն ու նպատակները, դժվար կլինի կանխել դրա վերահսկումն այսօր, ինչի հնարավոր լինելու մասին հաճախ են խոսում լրագրողներն ու քաղաքագետները[4]:

Սառը պատերազմի ուսումնասիրության խնդիրը այսօր էլ արդիական է, քանի որ հնարավորություն է տալիս կանխելու նաև արտաքին քաղաքականության ոլորտում հապճեպ և չնախատեսված այնպիսի որոշումների կայացմանը, որոնք կարող են հանգեցնել հակամարտության, բախումների: Միևնույն ժամանակ, այս թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այսօր ևս միջազգային-քաղաքական ասպարեզում մրցակցային երևույթները իրենցում պարունակում են սառը պատերազմին բնորոշ հատկանիշներ և դրանով իսկ վտանգում խաղաղությունը:

Սույն աշխատանքի ուսումնասիրման առարկա են հանդիսանում սառը

[4] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=v6Vs74j4kpQ
http://inosmi.ru/world/20150522/228181152.html

պատերազմը, համապատասխան պատմական ժամանակաշրջանը, հակամարտության ծագումը, պատճառները, փուլերը, նպատակները, հետևանքները, արդի ժամանակներում սառը պատերազմի դրսևորումները: Սույն աշխատանքում ուսումնասիրություններ կատարվել են հետևյալ խնդիրների տեսանկյունից.

- սահմանել և ներկայացնել սառը պատերազմի հասկացությունը, էությունը, տարրերը,
- բացահայտել սառը պատերազմի ծագումը, նպատակներն, ընթացքն, ավարտը և հետևանքները,
- ներկայացնել և վերլուծել սառը պատերազմի կարևոր ծրագրերը, դաշինքները,
- անդրադառնալ ժամանակաշրջանի նշանավոր պատմական, ռազմական, քաղաքական առաջնորդների դերին և գործունեությանը,
- վերլուծել սառը պատերազմի հետևանքները,
- բացահայտել արդի ժամանակներում սառը պատերազմի դրսևորումները:

Աշխատանքի համար ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել՝ Ա. Ռ. Հակոբյանի, Ջ. Առնոլդի, Ջ. Բերտի, Ու. Դաղլի, Ս. Յ. Լավրենյովի, Ի. Մ. Պոպովի, Ի. Մ. Իլինսկիի, Լ. Ն. Նիժինսկիի, Ի. Ա. Չեպիշևի, Բ. Գ. Պուտլինի, Վ. Ա. Զոլոտարևի, Ն. Վ. Իլինսկիի և այլ հեղինակների աշխատությունները: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

1. ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Սառը պատերազմը համաշխարհային աշխարհաքաղաքական, ռազմական, տնտեսական, գաղափարական հակամարտությունն է Խորհրդային Միության և նրա դաշնակիցների, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների միջև: Այն տևել է 1946 - 1989 թթ.[5]:

Պատմաբան Ա. Ս. Օրլովի կարծիքով՝ «Սառը պատերազմը» քաղաքական կուրս է, որն իրականացվում էր երկու պետությունների կողմից՝ մեկը մյուսի հանդեպ (ԱՄՆ, ԽՍՀՄ) 1940-ական թթ. կեսերից մինրև 1990-ական թթ. սկիզբը: Վերջինս բնութագրվում է նախ և առաջ երկու կողմերի թշնամական, քաղաքական գործողություններով[6]:

Արևմուտքում այս հակամարտությունն անվանել են «սառը պատերազմ»՝ առանց ուղղակի զինված հակամարտության, որից «երկու աշխարհներն ու երկու համակարգերը» կարողացան խուսափել ի հաշիվ դիվանագետների, հետախույզների, հակահետախույզների, լրտեսների ընդլայնված հակամարտության, մշակույթի, սպորտի և անգամ կյանքի ընդհանուր մակարդակի մրցակցության[7]:

Սառը պատերազմ արտահայտությունն առաջին անջամ օգտագործել է Ջորջ Օրուելը 1945թ. հոկտեմբերի 19-ին բրիտանական «Թրիբյուն» շաբաթաթերթում տպագրած «Դու և ատոմային ռումբը» հոդվածում[8]: Ըստ Օրուելի, ատոմային ռումբի հայտնվելը այլ պետությունների ձեռքում (ԱՄՆ-ից բացի) կարող է հանգեցնել աշխարհում երկու-երեք «հրեշավոր գերտերությունների» առաջ գալուն, որոնք, զենքին տիրապետելու շնորհիվ հաշված րոպեների ընթացքում կարող են ոչնչացնել միլիոնավոր մարդկանց և միմյանց միջև բաժանել աշխարհը: Օրուելի կարծիքով, այդ գերտերությունները միմյանց միջև կարող են կնքել լուռ համաձայնագիր՝ միջուկային զենքը իրար դեմ չօգտագործելու վերաբերյալ: Այսպիսով, մնալով չհաղթված նրանք կգտնվեն հարևանների հետ «մշտական «սառը պատերազմի» մեջ» («in a permanent state of ‘cold war’ with its neighbors»): Ըստ նրա, իրադրության նման զարգացումը վերջ

---

[5] Տե՛ս https://ru.wikipedia.org

[6] Տե՛ս Орлов А. С., Георгиев В. А. История России с древнейших времен до наших дней. Учебник. М. «ПБОЮЛ Л. В. Рожников», 2000, էջ 45:

[7] Տե՛ս Лавренов С.Я., Попов И.М. Советский Союз в локальных войнах и конфликтах. М., 2003, էջ 128:

[8] Տե՛ս Cold War // Encyclopædia Britannica:

կտար լայնածավալ պատերազմին այն գնով, որ ամեն դեպքում «խաղաղությունը խաղաղություն չէ»[9]:

1946թ. մարտին Օրուելը գրում է, որ 1945թ. Մոսկվայի կոնֆերանսից հետո «Ռուսաստանը «սառը պատերազմ» է սկսել Բրիտանիայի և Բրիտանական կայսրության դեմ»[10]:

«Սառը պատերազմ» տերմինը պաշտոնական շրջանառության մեջ դրվեց 1946թ. մարտի 5-ին ԱՄՆ Ֆուլտոն քաղաքում Ուինստոն Չերչիլի հայտնի ելույթից հետո: Ռուս լեզվաբան Ս. Ի. Օժեգովը տերմինը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Դա իմպերիալիստական պետությունների քաղաքականությունն էր, որն ուղղված էր սրացնելու լարվածությունը և թշնամանքը ԽՍՀՄ և այլ սոցիալիստական պետությունների հետ»[11]:

Տերմինի ժամանակակից սահմանումն հետևյալն է. «Սառը պատերազմը համաշխարհային հակամարտություն էր երկու ռազմաքաղաքական դաշինքների միջև՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորությամբ, որը չվերածվեց ակնհայտ ռազմական բախումների»[12]: «Պատերազմ» տերմինն այստեղ պայմանական է, քանի որ ուղղակի իմաստով հակամարտությունը պատերազմի չի վերածվել:

Հակամարտության կարևոր տարրերից մեկը գաղափարախոսությունն էր: Կապիտալիստական և սոցիալիստական մոդելների միջև եղած արմատական խոր տարբերությունները սառը պատերազմի հիմնական պատճառներից մեկն էին: Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթած երկու գերտերությունները փորձում էին վերակառուցել աշխարհը ըստ իրենց գաղափարախոսության: Ժամանակի ընթացքում, հակամարտությունը դարձավ երկու կողմերի գաղափարախոսության տարր, և օգնեց ռազմաքաղաքական դաշինքների առաջնորդներին, իրենց շուրջ համախմբել համախոհներին՝ «ընդդեմ արտաքին թշնամու»[13]:

Հակամարտության ներքին տրամաբանությունը կողմերից պահանջում էր հակամարտ ռազմաքաղաքական դաշինքների բոլոր անդամների միասնությունը:

---

[9] Տե՛ս Orwell, «You and the Atomic Bomb», Tribune, 19 October 1945:
[10] Տե՛ս Orwell, George, The Observer, 10 March 1946:
[11] Տե՛ս Толковый словарь Ожегова. С.И. Ожегов, Н.Ю. Шведова. 1949-1992.
[12] Տե՛ս http://files.school-collection.edu.ru
[13] Տե՛ս Ильинский И. М. Холодная война: новый этап // Знание. Понимание. Умение. 2015. № 3.էջ 5-17:

Միևնույն ժամանակ, նրանք խառնվում էին աշխարհի ցանկացած կետում կոնֆլիկտների և իրադարձությունների զարգացմանը: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի բոլոր ուժերը առաջին հերթին ուղղված էին քաղաքական ոլորտում գերիշխանության ձեռքբերմանը և իրենց ազդեցության սահմանների հնարավորինս շատ ընդլայնմանը: Հենց սկզբից հակամարտությունը խթանեց հակամարտ կողմերի ռազմականացումը: Սառը պատերազմն ուղեկցվում էր սովորական և միջուկային զենքերի մրցավազքով, ինչը սպառնում էր վերածվել երրորդ համաշխարհային պատերազմի:

Սառը պատերազմի վերաբերյալ տարբեր են տեսաբանների դիրքորոշումները: Մի մասը կարծում է, որ այդ երևույթը 20-րդ դարի ծնունդ է, և որ նմանատիպ երևույթ անցյալում երբևէ չի եղել: Ըստ այս մոտեցման սառը պատերազմը նորագույն ժամանակների պատմության, աշխարհի քաղաքական նոր բաժանման, նոր գաղափարախոսությունների, ինչպես նաև ատոմային և միջուկային զենքերի հայտնագործումով է պայմանավորված: Մյուսները հակված են կարծելու, որ սառը պատերազմի նման երևույթներ դիտվել են եռևս հին ժամանակներում: Օրինակ, Հռոմի և Կարթագենի միջև 120-ամյա հակամարտությունը՝ մ.թ.ա III-II դարերում: Դադարի շրջաններում երկու կողմերն էլ զինվում էին, ձգտում էին միմյանց հնարավորինս մեծ վնասներ հասցնել՝ ի հաշիվ ծովային շրջափակումների, լայնածավալ կործանիչ գործողությունների, ընդվզումների հրահրմամբ, դաշնակիցներից միմյանց զատելու տարբեր միջոցների գործադրմամաբ, գաղտնի լրտեսությամբ և դիվանագիտությամբ: Նմանատիպ պատերազմների մասին մ.թ.ա VI-V դարերում գրել է չինացի մտավորական Սուն-Ցզին[14]:

Այսպիսով, սառը պատերազմը ոչ միայն կոնֆլիկտ էր ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև, այլև՝ քաղաքական ռեժիմների հակամարտություն, որն ուղեկցվում էր սպառազինությունների մրցավազքով: Այսինքն, սառը պատերազմը համաշխարհային աշխարհաքաղաքական, տնտեսական, ռազմական, գաղափարական հակամարտություն էր, բախում՝ Խորհրդային Միության և նրա դաշնակիցների և ԱՄՆ-ի ու վերջինիս դաշնակիցների միջև, որը տևեց 1940-ական

[14] Տե՛ս Акопян А.Р. Холодная война как социально-политический феномен. Социальные проблемы 2008, № 2:

թվականների կեսեռից, մինչև 1990-ական թվականների սկիզբը[15]:

[15] Տե՛ս Арнольд Дж., Берт Дж, Дадли У. Пламя "холодной войны": Победы, которых не было. Под ред. Питера Цуроса (англ.), русск., пер. Ю.Яблокова. М., АСТ, Люкс, 2004. (Великие противостояния):

2. 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սառը պատերազմի սկսման վերաբերյալ ճշգրիտ ամսաթիվ չկա: Շատ պատմաբաններ համարում են, որ Գերմանիայի նկատմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմում ԽՍՀՄ-ի հաղթանակը փոխեց աշխարհի աշխարհաքաղաքական պատկերը: Եվրոպայի և Ճապոնիայի նախկին գաղութային երկրները կանգնած էին ավերակների վրա, մինչդեռ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը արագ սկսեցին զարգանալ ու առաջ գնալ: Եվ հենց այդ պահից երկու գերտերությունների շահերը հակակշռվեցին. ինչպես ԽՍՀՄ-ը, այնպես էլ ԱՄՆ-ը ձգտում էին հնարավորինս հեռու տարածել իրենց ազդեցությունը: Սկսվեց պայքար գրեթե բոլոր ոլորտներում. գաղափարախոսական՝ մարդկանց միտքն ու հոգիները նվաճելու համար, ռազմազինության՝ որպեսզի հակառակորդի հետ հնարավոր լինի խոսել ուժի տեսանկյունից, տնտեսական՝ հասարակական կարգի առավելությունը ներկայացնելու համար, անգամ՝ սպորտում: Ինչպես ասել է Ջոն Քեննեդին «Պետության միջազգային վարկանիշը չափվում է երկու հանգամանքով՝ միջուկային հրթիռներով և օլիմպիական ոսկե մեդալներով»[16]:

Չերչիլից առաջ պաշտոնական ոլորտում «սառը պատերազմ» արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է 1947 ապրիլի 16-ին Բեռնարդ Բարուխը, ԱՄՆ նախագահ Հարի Թրյումենի խորհրդականը, Հարավային Կառոլինային նահանգային նիստում: Երկրորդ աշխարհամարտից հետո հաստատվեց խորհրդային վերահսկողություն Արևելյան Եվրոպայում, ինչի հետևանքով Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը ԽՍՀՄ-ին սկսեցին դիտել որպես սպառնալիք: Խորհրդային հեղինակները հաստատում էին, որ ամերիկյան իմպերալիզմի արտաքին քաղաքականությունը ուղղված է երկու կողմերի միջև հակամարտության սրացմանը, ինչը հիմնականում կապված է ԱՄՆ-ի մոնոպոլիստական շահերի հետ և նպատակ է հետապնդում պահպանել և ամրապնդել կապիտալիստական համակարգը[17]:

Հեղինակների մի մասը սառը պատերազմի սկիզբը կապում է 1945թ. Ղրիմի (Յալթա) կոնֆերանսի հետ, երբ պարզ դարձավ աշխարհում քաղաքական նոր

---

[16] Տե՛ս http://www.coldwar.ru
[17] Տե՛ս http://www.avtoref.mgou.ru/ar/ar650.doc

բաժանումներ կատարելու հնարավորությունը: 1945թ. գարնանը ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ է ներկայացրել Թուրքիային՝ Սև ծովի նեղուցների փոփոխման և Դարդանելիս նեղուցում ԽՍՀՄ ռազմածովային բազա ստեղծելու նպատակով[18]:

1946թ. ապրիլին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինստոն Չերչիլը հանձնարարում է պատրաստել ԽՍՀՄ-ի հետ հնարավոր պատերազմի ծրագիր, ինչի մասին Չերչիլը գրել է իր նոթերում[19]: 1946թ. Չերչիլը, որպես մասնավոր անձ, ելույթ ունեցավ Ֆուլտոնում (ԱՄՆ): Չերչիլն իր ելույթում խիստ դատապարտում է Սովետական Միության, հատկապես, Իոսիֆ Ստալինի Եվրոպայի հանդեպ վարած քաղաքականությունը և հայտարարում. «Դաշնակից երկրների լուսավոր հաղթանակի վրա ստվերներ են հայտնվել: … Մայրցամաքի ողջ երկայնքով՝ Բալթյան Ստետինից մինչև Ադրիատիկ՝ Տրիեստ, երկաթյա վարագույր է իջել»[20]: Այս ելույթը սրեց ԽՍՀՄ և Արևմուտք հարաբերությունները, իսկ Չերչիլի ֆուլտոնյան ելույթը, շատ հեղինակներ համարում են հենց սառը պատերազմի սկիզբը[21]:

Ու. Չերչիլն առաջարկում էր անգլախոս երկրներին զինվել՝ կոմունիզմի դեմ պայքարում: Փաստացի, հակամարտությունը սրվել էր ավելի վաղ, սակայն 1946թ. այն խորացել էր այն պատճառով, որ ԽՍՀՄ-ը հրաժարվում էր Իրանի օկուպացված տարածքներից դուրս բերել իր զորքերը:

Չերչիլը կոչ էր անում չկրկնել 30-ական թթ. սխալները և շարունակել հետևել ազատության, ժողովրդավարության և քրիստոնեական արժեքներին՝ կապիտալիզմին դիմադրելու համար, ինչի համար շատ կարևոր է անգլոսաքսոնական ազգերի միավորումն ու համախմբումը:

Ի. Ստալինը «Պրավդա» թերթին տված հարցազրույցում Չերչիլին դրեց Հիտլերի կողքին՝ հայտարարելով, որ Չերչիլը Արևմուտքին ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի կոչ է անում[22]:

1946թ. ակտիվացան հույն ապստամբները, որոնց շարժումը գլխավորում էին

---

[18] Տե՛ս Византийское Наследство: Советско-турецкие территориальные проблемы на Потсдамской конференции, http://vizantarm.am/page.php?88

[19] Տե՛ս Вторая мировая война. Черчилль У. Сокр. пер. с англ. Кн. третья, т. 5-6. М 1991, էջ 574:

[20] Տե՛ս http://civilngo.com/march5-1946-winstonchurchillspeech-heralded-thebeginning-of-thecoldwar

[21] Տե՛ս Страницы истории, Начало «Холодной войны» http://istorik.org

[22] Տե՛ս Интервью И. В. Сталина газете «Правда» о речи Черчилля в Фултоне (14 марта 1946 года), http://www.coldwar.ru/stalin/about_churchill.php

կոմունիստները: Նրանք զենք պետք է ներկրեին Ալբանիայից, Հարավսլավիայից և Բուլղարիայից, որտեղ արդեն իշխանության գլուխ էին անցել կոմունիստները: Լոնդոնում, Արտաքին գործերի նախարարների խորհրդաժողովի ժամանակ, ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարը պահանջում է իրեն պրոտեկտորատի իրավունք տալ Մերձավոր Արևելքում՝ Լիբանանում, որպեսզի նա տեղեր ունենա Միջերկրական ծովում: 1949թ. Հունաստանում սկսված այդ պայքարն ավարտվեց կոմունիստների պարտությամբ:

Որոշ քաղաքագետներ կողմ էին ԽՍՀՄ-ի հետ հաշտությանը: Այս տեսակետի կողմնակից էր ԱՄՆ Առևտրի նախարար Հենրի Ուոլլեսը: Նա գտնում էր, որ ԽՍՀՄ պահանջներն արդարացի են, և առաջարկում էր գնալ որոշակի փոխզիջման՝ ԽՍՀՄ-ին իրավունք տալով գերիշխելու Եվրոպայի և Ասիայի որոշ տարածքներում:

ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև պայքարն ավելի խորացրել «Մարշալի պլանը»[23] և «Տրյումենի դոկտրինան»[24]:

Արդյունքում աշխարհը բաժանվել էր երկու ճամբարների՝ կապիտալիստական և սոցիալիստական: Եվ այս և այն կողմերում ստեղծվել էին այսպես կոչված կոլեկտիվ անվտանգության համակարգեր՝ ռազմական դաշինքներ:

1949թ. ապրիլին ստեղծվեց Հյուսիսատլանտյան դաշինք կազմակերպությունը (ՆԱՏՕ), որի կազմի մեջ մտնում էին ԱՄՆ-ը, Կանադան և Արևմտյան եվրոպայի երկրները[25]: 1955թ. մայիսին ստորագրվեց Վարշավյան պայմանագիրը, որով հիմնադրվեց Վարշավայի պայմանագրի կամ դաշինքի կազմակերպությունը (ՎՊԿ): Այս դաշինքի կազմի մեջ մտնում էին՝ Ալբանիան, Բուլղարիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, ԽՍՀՄ-ը, Չեխոսլովակիան[26]: Սրանով ավարտվեց աշխարհի բևեռացումը և ստեղծված խմբավորումները՝ իրենց առաջնորդների գլխավորությամբ սկսեցին պայքարել այսպես կոչված երրորդ աշխարհի երկրներում իրենց ազդեցությունը տարածելու համար:

Սառը պատերազմի սկիզբը կապված է ատոմային ռումբի հետ: Ինչպես

---

[23] Տե՛ս Пихоя Р. Г. Советский Союз: история власти. 1945—1991. Новосибирск:Сибирский хронограф, 2000, էջ 26-27:

[24] Տե՛ս Начало Холодной войны. Доктрина Трумэна. План Маршалла, http://www.coldwar.ru/bases/bases1.php

[25] Տե՛ս https://ru.wikipedia.org (НАТО)

[26] Տե՛ս https://ru.wikipedia.org (Организации Варшавского договора)

հայտնի է, 1945թ. ԱՄՆ-ը միջուկային զենք ունեցող միակ երկիրն էր աշխարհում: Ճապոնիայի հետ պատերազմի ժամանակ, ԱՄՆ-ը ատոմային ռումբեր կիրառեց ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքաների վրա: Ստրատեգիական այս գերակայությունը հանգեցրել էր այն բանին, որ ամերիկյան ռազմական գործիչները անգամ ԽՍՀՄ-ին հարվածելու ծրագրեր էին մշակում: Սակայն միջուկային զենքի ամերիկյան մոնոպոլիան պահպանվեց ընդամենը չորս տարի: 1949թ. ԽՍՀՄ-ը փորձարկեց իր առաջին ատոմային ռումբը: Այս իրադարձությունը մեծ ցնցում դարձավ Արևմտյան աշխարհի համար: Կատարված մի շարք փորձարկումների արդյունքում ԽՍՀՄ-ում շուտով ստեղծվեցին ատոմային, ապա նաև՝ միջուկային և ջերմամիջուկային զենքեր: Պատերազմելը բոլորի համար դարձավ խիստ վտանգավոր և լի բազում անկանխատեսելի հետևանքներով: Ռազմազինության այս մրցավազքը աճում ու զարգանում էր մեծ տեմպերով: հենց մի կողմը ստեղծում էր որևէ զենք, մյուսը՝ ներդնում էր բոլոր միջոցներն ու ռեսուրսները նույն արդյունքին հասնելու համար: Այս ամենի հիմքում ինչ-որ տեղ ընկած էր Ռ. Ռեյգանի այն թեզը, թե «Ոչ ոք չի ձգտում գործածության մեջ դնել ատոմային ռումբը, սակայն թշնամին պետք է քնի այն համոզմունքով, որ մենք այն ամեն րոպե կարող ենք կիրառել»[27]:

Սառը պատերազմին բնորոշ էին այսպես կոչված «թեժ կետերը»: Ցանկացած տեղային կոնֆլիկտ դուրս էր բերվում միջազգային հարթակ, այն հանգամանքի շնորհիվ, որ հակառակորդ կողմերից յուրաքանչյուրը պաշտպանում էր հակամարտող կողմերից մեկին:

Կողմերի միջև կոնֆլիկտը սրացավ հատկապես 40-50-ական թվականներին՝ կորեական պատերազմի ժամանակ: 1945թ. խորհրդային և ամերիկյան զորքերը ազատագրեցին Կորեան ճապոնացիներից և բաժանեցին երկու մասի: Հյուսիսում իշխանության եկան կոմունիստները, իսկ հարավում ռազմական ուժերը, որոնք ապավինում էին ԱՄՆ-ի օգնությանը: Թերակղզում ձևավորվեցին երկու պետություններ՝ Հյուսիսային Կորեայի Ազգային Ժողովրդավարական Հանրապետություն և Հարավային Կորեայի Հանրապետություն: Հյուսիսային կորեայի ղեկավարությունը ձգտում էր միավորել երկիրը՝ անգամ զենքի ուժով, ինչն իր

[27] Տե՛ս Петер Швейцер, «Победа», Роль тайной стратегии администрации США в распаде Советского Союза и социалистического лагеря, http://sheba.spb.ru/lib/shveicer-pobeda.htm :

հերթին խորացնում էր ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հակամարտությունը: Բեռլինի պատի կառուցումը, ճգնաժամը Կուբայում, պատերազմն Աֆղանստանում՝ երկու գերտերությունների հակամարտության արդյունքներն էին: Պայմանականորեն, սառը պատերազմի ընթացքը բաժանվում է մի քանի փուլերի[28]: Այսպես.

Առաջին փուլ: Թեև ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հակասությունները սրվել էին դեռևս 1943թ. Թեհրանում, դրանց որոշակի ուժեղացումը տեղի ունեցավ միայն 1947թ., երբ Խորհրդային Միությունը Արևմտյան Եվրոպայի երկրներին կոչ էր անում հրաժարվել «Մարշալի պլան»-ից, իսկ ԱՄՆ-ը իր ռազմաբազաներն էր տեղադրել Թուրքիայի տարածքում՝ Խորհրդային Միության կողքին: Սառը պատերազմի առաջին փուլում տեղի են ունեցել հետևյալ իրադարձությունները. Գերմանիայի և Կորեայի տարածքների օկուպացման վերաբերյալ պայմանավորվածության չեղարկում,Հյուսիսային Կորեայի Ազգային Ժողովրդավարական Հանրապետության, Հարավային Կորեայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Գերմանիաի Ժողովրդավարական Հանրապետության, Չինաստանի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության հռչակում, կորեական պատերազմը, ՆԱՏՕ-ի ստեղծումը, ամերիկա-խորհրդային դիմակայությունը Մերձավոր արևելքում, միջուկային զենքի փորձարկումները ԽՍՀՄ-ում: Համարվում է, որ սառը պատերազմի առաջին փուլն ավարտվել է Իոսիֆ Ստալինի մահվամբ:

Երկրորդ փուլ: Ստալինի մահից հետո Կրեմլում վիճակը փոքր ինչ թուլացավ, ինչը հանգեցրեց նաև միջազգային լարվածության թեթևացմանը: Սակայն, 1955թ. Ն. Խրյուշչովի դիրքերի ամրապնդումը, հանգեցրեց խորհրդային-ամերիկյան հակամարտության նոր փուլի: Այն նշանավորվեց Վարշավյան Դաշինքի (ՎՊԿ)՝ որպես ՆԱՏՕ-ի հակակշիռ կառույցի ստեղծմամբ: Ի պատասխան, ԱՄՆ-ում սկսեցին ստեղծել նման կառույցներ՝ Ասիայում: Այդպիսի դաշինքներ դարձան՝ Կենտրոնական պայմանագրի կազմակերպությունը և Հարավ-արևելյան Ասիայի պետությունների ասոցիացիան:

Սառը պատերազմի սրմանը նպաստում էր նաև ռազմազինման մրցավազքը: Երկու գերտերություններն էլ զինվում էին ստրատեգիական ավիացիայով, բալիստիկ

---

[28] Տե՛ս Нежинский Л. Н., Челышев И. А. Доктринальные основы советской внешней политики в годы "холодной войны" // Советская внешняя политика в годы «холодной войны» (1945 – 1985 гг.). Новое прочтение / Отв. ред. Л. Н. Нежинский. — М.: Международные отношения, 1995, էջ 9—46:

հրթիռներով, միջուկային ռմբակոցիչներով; Միաժամանակ, ուժեղ սրվում էր իրավիճակը Բեռլինում: 1961թ. Խորհրդային բանակը սկսեց Բեռլինի պատի կառուցումը: 1959թ. Կուբայում հաստատվեց սոցիալիստական ռեժիմ և ԽՍՀՄ-ը այնտեղ տեղակայեց իր հրթիռները, որպես համարժեք պատասխան Թուրքիայում և Հունաստանում ամերիկյան հրթիռների տեղակայման: Խորհրդային հրթիռների տեղակայումը Կուբայում 1962թ. խուճապ առաջացրեց ԱՄՆ-ում: Երկու գերտերությունների միջև առկա հակամարտությունը սպառնում էր վերածվել միջուկային պատերազմի երկու տերությունների միջև: Կարիբյան ճգնաժամի լուծումը հնարավոր դարձավ 1962թ. հոկտեմբերին Քենեդիի և Խրյուշչովի հեռախոսազանգով: Խորհրդային զորքերի դուրսբերումը Կուբայից դարձավ երկրորդ փուլի ավարտը:

Երրորդ փուլ: Միջուկային պատերազմի սպառնալիքը սթափեցրեց խորհրդային և ամերիկյան առաջնորդներին: երկու գերտերությունները սկսեցին բանակցել սպառազինությունների կրճատման վերաբերյալ: Նման բանակցություններ տեղի են ունեցել 1972, 1979 թվականներին: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը աջակցում էին արյունոտ հակամարտություններին՝ Վիետնամում, Մերջավոր Արևելքում, Աֆրիկայի երկրներում: Սառը պատերազմի այս փուլն ավարտվեց 1979թ., երբ Խորհրդային Միությունը զորքեր մտցրեց Աֆղանստան: *Չորրորդ և հինգերորդ փուլեր*: Ի պատասխան Աֆղանստանում Խորհրդային Միության զորքերի տեղակայմանը, ԱՄՆ-ը պատժամիջոցներ կիրառեց ԽՍՀՄ-ի նկատմամբ և ուժեղացրեց Եվրոպայում առկա ռազմական ուժերը: Երկու կողմերը սպառազինությունների մրցավազքին: Սպառազինության մրցավազքը տևեց մինչև 1987թ., երբ գերտերությունների միջև ստորագրվեց պայմանագիր ստրատեգիական նշանակության զենքերի վերաբերյալ; Սկսվեց սառը պատերազմի վերջին փուլը: Այս պայմանագրին հաջորդեցին խորհրդային զորքերի դուրս բերումը Աֆղանստանից, Վարշավայի պայմանագրի լուծարումը, Բեռլինի պատի քանդումը, ազատ ընտրությունների անցկացումը Արևելյան Եվրոպայի երկրներում: 1991թ. դադարեց գոյություն ունենալ Խորհրդային Միությունը և նրա հետ պատմություն դարձավ նաև սառը պատերազմը:

Այսպիսով, միայն նախորդ դարի 80-ական թվականներին Արևելքի և

Արևմուտքի միջև հարաբերությունները սկսեցին հետզհետե կարգավորվել՝ «Վերակառուցման» ծրագիրն այս առումով մեծ փոփոխությունների հանգեցրեց[29]:

[29] Տե՛ս Холодная война: В 2 т. (Военная история Российского государства / под ред. В.А. Золотарева) М.,ИНЭС, РУБИН, 2014. Т. 1: Противостояние двух сверхдержав / Путилин Б.Г., Золотарев В.А., Т. 2: От Потсдама до Мальты / Илиевский Н.В. :

3. ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև հարաբերությունները լավացան, բայց ոչ մշտապես: ԽՍՀՄ փլուզումը, Ռուսաստանում առկա տնտեսական և սոցիալ-քաղաքական ճգնաժամը, նրա միջազգային հեղինակության և ռազմաքաղաքական ներուժի անկումը հանգեցրին նրան, որ ԱՄՆ-ը դարձավ աշխարհի միակ գերտերությունը:

Վարշավյան պայմանագրի լուծարմամբ Ռուսաստանում կարծում էին, որ ՆԱՏՕ-ն նույնպես կլուծարվի, նամանավանդ, որ ԱՄՆ-ի ղեկավարությունը տվել էր որոշակի երաշխիքներ այն առումով, որ Դաշինքը չի ընդլայնվի դեպի արևելք, սակայն 1999թ. ՆԱՏՕ-ի կազմի մեջ մտան՝ Չեխիան, Լեհաստանը, Հունգարիան, 2004թ.՝ Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Բուլղարիան: Այս փաստը, ինչպես նաև Հարավսլավիայում, Աֆղանստանում, Իրաքում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների գործողությունները տարակուսանք առաջացրեցին Ռուսաստանում՝ ԱՄՆ-ի հետ փոխհարաբերությունների ձևավորման վերաբերյալ:

Մյուս կողմից, 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո, Ռուսաստանը միացավ ԱՄՆ-ի կողմից գլխավորվող հակաահաբեկչական խմբավորմանը, այն նկատառումով, որ «ահաբեկչություն» հասկացության մեջ կարող է ներառել նաև չեչեն անջատողականների գործունեությունը՝ այդպիսով ստանալով Արևմուտքի օգնությունը:

2003թ. Ռուսաստանը Ֆրանսիայի և Գերմանիայի հետ փաստացի գլխավորում էր Իրաքում ԱՄՆ-ի գորոծողություններին «դեմ ճամբարը»: 2004թ. ռուս-ամերիկյան հարաբերություններում սկսվեց «սառեցում», որը կապված էր Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների հետ («Նարնջագույն հեղափոխություն»): Ռուսատանի և ԱՄՆ-ի պայքարը՝ իրենց ազդեցությունը տարածելու, իր մեջ ներառեց նախկին խորհրդային ողջ տարածքը:

ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև հիմնական խնդիրների շարքին են դասվում՝ Ռուսաստանի օգնությունն Իրանին՝ միջուկային ծրագրերի իրականացման, էներգիաանվտանգության համար, Վրաստանում և Ուկրաինայում առկա իրավիճակները, Ինչպես նաև՝ Եվրոպայում տեղակայված ամերիկյան

հակահրթիռային կայանները: Ժողովրդավարության զարգացման պատրվակով, ԱՄՆ-ը Ռուսաստանում ֆինանսավորում է մի քանի ոչ կառավարական կազմակերպություններ և քաղաքական կուսակցություններ:

2006թ. մայիսի 4-ին ԱՄՆ-ի փոխնախագահ Ռիչարդ Չեյնը, Վիլնյուսում գտնվելիս, հանդես եկավ ճառով, որը հիմա շատերն անվանում են «Վիլնյուսյան», ինչպես Չերչիլի ֆուլտոնյան ճառը: Նրա խոսքերով ԱՄՆ-ին դուր չեն գալիս «Ռուսաստանի կողմից օգտակար հանածոների օգտագործումը՝ որպես արտաքին ճնշման միջոցի, մարդու իրավունքների խախտման դեպքերը, ինչպես նաև միջազգային ասպարեզում ապակառուցողական գործողությունները»[30]:

Ռուսաստանի հրաժարվելը Իրանի, Սիրիայի, ԿԱԺՀ-ի, Բելառուսի և այլ պետությունների հետ համագործակցությունից, «անհանգստություն» է առաջացնում ԱՄՆ-ում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ռուս-ամերիկյան մշտական վեճերի:

2007թ. ՌԴ և ԱՄՆ-ի միջև փոխհարաբերությունները նոր ուժով լարվեցին՝ Լեհաստանում և Չեխիայում ամերիկյան հակահրթիռային կայաններ տեղավորելու պատճառով: ԱՄՆ-ի խոսքերով, այդ քայլն ուղղված է պաշտպանելու Եվրոպան հյուսիսկորեական և իրանական հրթիռներից: Ռուսական ղեկավարությունը կտրականապես մերժում է խնդրի նման պարզաբանումը:

2007թ. փետրվարի 8-ին ԱՄՆ-ի Պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հայտարարեց, որ «ԱՄՆ-ը պետք է պատրաստ լինի պատրաստ լինի զինված ընդհարման»: 2007թ. փետրվարի 10-ին Մյունխենի անվտանգության խորհրդաժողովում, Պուտինն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վերաբերյալ հանդես եկավ կոպիտ քննադատություններով[31]: ՌԴ զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Սոլովյովն իր հերթին հայտնեց, որ եթե ԱՄՆ-ի հակահրթիռային կայանները տեղադրվեն Արևելյան Եվրոպայում, Ռուսաստանը չեղյալ կհայտարարի փոքր և միջին հեռավորության հրթիռների լիկվիդացման մասին պայմանագիրը[32]:

ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև նոր կոնֆլիկտի պատճառ դարձավ վրացական զորքերի

---

[30] Տե՛ս Враг у ворот, http://www.kommersant.ru/doc/671371
[31] Տե՛ս Мюнхенская речь Владимира Путина, https://ru.wikipedia.org
[32] Տե՛ս К вопросу о денонсации Договора о РСМД, http://so-l.ru/news

մուտքը Հարավային Օսեթիա: Ռուսական զորքերը գրթե ամբողջությամբ մաքրեցին չճանաչված հանրապետության տարածքը վրացական զորքերից և մի քանի օր շարունակեցին Վրաստանի տարածքում ռազմական օբյեկտների ռմբակոծումը, ինչից հետո Ռուսաստանը պաշտոնապես ճանաչեց Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը: Ինչից հետո մեծ հարցականի տակ հայտնվեցին Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի միջև հետագա փոխհարաբերությունները[33]: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեվը Ստրելնեում Իսպանիայի վարչապետի՝ Խոսե Լուիս Սապատերոյի հետ հանդիպման ժամանակ ասաց, որ «Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև այսօր չկան գաղափարական այնպիսի տարբերություններ, որոնց շուրջ կարող է առաջանալ սառը կամ որևէ մեկ այլ պատերազմ»[34]: Բայց հնարավոր է, որ դա միայն դիվանագիտական քայլ էր:

Ամերիկացի լրագրող Քոենը, «The Nation» ամսագրի վերջին համարում տպված բազմանշանակալից վերնագրով՝ «Զանգվածային լրատվամիջոցների նոր սառը պատերազմը» հոդվածում, գրում է, որ ԽՍՀՄ փլուզումից տասներեք տարի անց, ԱՄՆ ԶԼՄ-ները Ուկրաինայում տեղի ունեցող ընտրությունները օգտագործում են Ռուսաստանի դեմ նոր սառը պատերազմ հրահրելու համար: Ինչը ևս մեկ անգամ հաստատում է ՌԴ-ի և ԱՄՆ-ի միջև ոչ բարիդրացիական հարաբերությունները[35]:

Այսօր ռուս-ամերիկյան մրցակցությունը, որը հենվում է սառը պատերազմի ավանդույթների վրա, ընթանում է հետխորհրդային տարածքի վրա վերահսկողություն սահմանելու շուրջ և էներգետիկ խնդիրների ոլորտում: Զուգահեռաբար հրատապ են դարձել Մոսկվա-Բեռլին-Փարիզ, Մոսկվա-Թեհրան, Մոսկվա-Պեկին (հատկապես Շանհայի համագործակցության կազմակերպության կայացման համատեքստում) հարաբերությունների խնդիրները: Ակնհայտ է, որ եթե այդ հարաբերությունները տեղափոխվեն լիարժեք ռազմավարական մակարդակ, ապա դա կհանգեցնի գլոբալ քաղաքական համակարգի լուրջ փոփոխությունների:

---

[33] Տե՛ս http://www.usinfo.ru

[34] Տե՛ս նույն տեղը:

[35] Տե՛ս Тимофеев Дмитрий Предчувствие холодной войны. Старые признаки и геополитические реалии // Политический журнал 2005, №2.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի ռազմաքաղաքական զարգացումների բնույթն ըմբռնելու համար օգտակար է համեմատել և համադրել դրանք 20-րդ դարի երկրորդ կեսին ընթացող գործընթացների հետ: Այն տարիների «սառը պատերազմը» (ՍՊ) և ներկայիս զարգացումներն ունեն ընդհանրություններ և տարբերություններ, որոնց վերլուծությունը պետք է որ նպաստի քաղաքական հեռանկարների վերաբերյալ հիմնավորված կանխատեսումներ կատարելուն:

Առաջին ՍՊ-ի դարաշրջանը բնութագրող առանցքային հասկացություններից էր «սպառազինությունների մրցավազքը», որը Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության առաջնորդությամբ ընթանում էր «Ազատ աշխարհի» և «Սոցիալիստական ճամբարի» միջև: Կողմերի «ռազմական գործիքներն» էին երկու խոշոր դաշինքները՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ, հիմնվել է 1949թ.) և Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը (ՎՊԿ, 1955-1991թթ.), որոնց ցամաքային «անմիջական շփման» գիծն անցնում էր Եվրոպայով և մասամբ՝ Հարավային Կովկասով: Նման երկբևեռ համակարգում «սպառազինությունների մրցավազքը» հիմնականում սիմետրիկ բնույթ էր կրում. ամերիկյան և խորհրդային զինված ուժերը տիրապետում էին գրեթե հավասար ներուժի: Այդ հավասարակշռության խախտումը որևէ ոլորտում կողմերը հիվանդագին էին ընդունում և դրությունը շտկելու համար դիմում էին հնարավոր բոլոր միջոցների: Նման իրավիճակը ծանր էր անդրադառնում հատկապես խորհրդային տնտեսության վրա, որը զգալիորեն զիջում էր արևմտյանին. համարվում է, որ ԽՍՀՄ փլուզման տնտեսական պատճառներից մեկը «սպառազինությունների մրցավազքն» էր: Ավելին, միանգամայն հիմնավոր է այն վարկածը, թե նման մրցավազքը ԱՄՆ-ի կողմից կիրառվող ռազմավարություն էր, որը «պարտադրվում» էր «սովետներին» նրանց ուժասպառ անելու նպատակով:

Ներկա ժամանակաշրջանին բնորոշ չեն նաև հակամարտող ռազմաքաղաքական դաշինքները: Շարունակում է գործել, որպես «ժառանգություն» Առաջին ՍՊ-ից, Հյուսիսատլանտյան կազմակերպությունը: Սակայն անգամ ՆԱՏՕ-ին այսօր հատուկ է որոշակի ներքին «քաղաքական անջատողականություն»՝ պայմանավորված հյուսիսատլանտյան և եվրակենտրոն գաղափարախոսությունների

հակասություններով: Կարելի է արձանագրել, որ ՆԱՏՕ-ն այլևս չի ընկալվում որպես Եվրոպան պաշտպանելու առաքելություն կատարող կազմակերպություն և այսօր ավելի շատ, քան նախկինում, սպասարկում է ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի շահերը: Սակայն բոլոր պարագաներում ՆԱՏՕ-ն չունի հավասարազոր մրցակիցներ և գերակայում է ռազմական հարթությունում: Այդ ոլորտում անհամեմատ ավելի համեստ դիրքեր է գրավում նախկին խորհրդային հանրապետություններից մի քանիսը ներառող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), իսկ զարգացման մեծ հեռանկարներ ունեցող Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ) որպես ռազմական դաշինք առայժմ չի ձևավորվել: Նույն պատկերն է նաև նախկին գլխավոր հակառակորդների պարագայում: Միացյալ Նահանգները ռազմական ոլորտում էապես գերազանցում է Ռուսաստանին և Չինաստանին ոչ միայն առանձին, այլև միասին վերցրած. ԱՄՆ ռազմական բյուջեն կազմում է աշխարհում կատարվող ռազմական ծախսերի գրեթե կեսը, իսկ ամերիկյան զինված ուժերը ռազմական տեխնիկայի և ռազմարվեստի ոլորտներում չունեն իրենց հավասարը: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ անգամ բացարձակ ռազմական գերազանցությունը չի կարող ԱՄՆ-ի համար երաշխավորել գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական գերակայություն աշխարհում: Դրա ցայտուն օրինակն է այն, ինչ տեղի է ունենում Իրաքում և ինչ տեղի կունենա գրեթե նույն տրամաբանությամբ ընթացող զարգացումների հետևանքով Աֆղանստանում. այս կամ այն երկրի ռազմական օկուպացիան դեռևս չի նշանակում լիարժեք վերահսկում այնտեղ ընթացող գործընթացների վրա:

Պետք է ընդունել, որ ամերիկյան ռազմավարությունը, չնայած շարունակաբար կատարելագործվում և ենթարկվում է բարեփոխումների, ինչ-որ առումով արխայիկ բնույթ է կրում: Թվում է, թե ամերիկյան քաղաքականությունը մշակողները դեռևս գտնվում են Առաջին ՍՊ-ում տարած հաղթանակի տպավորության տակ և վերարտադրում են արդեն պատմություն դարձած ժամանակաշրջանի մոտեցումը, երբ առաջնահերթ և որոշիչ խնդիրը ռազմական գերակայությունն էր: Նման պնդումը չի նշանակում, թե ռազմական ներուժը վերածվել է երկրորդական գործոնի և չի կարևորվում: Դա ընդամենը վկայում է այն մասին, որ արդի քաղաքականության տրամաբանությունը զգալի փոփոխություններ է կրել, և այսօր, առավել քան

նախկինում, կարևորագույն նշանակություն է ձեռք բերել քաղաքակրթական, գաղափարախոսական, սոցիալական, տնտեսական և բնական՝ հատկապես էներգետիկ, ռեսուրսների տիրապետումը։ Ելնելով այդ իրողությունից՝ Երկրորդ ՍՊ-ի դերակատարները հիմնավորված կերպով խուսափում են անհեռանկարային (հատկապես ԱՄՆ պարագայում) դասական սպառազինությունների մրցավազքից՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով իրենց ինքնիշխանությունն ապահովող ոչ միայն ռազմական, այլև տարաբնույթ այլ ռեսուրսների զարգացմանը։ Նման իրադրությունը պայմանավորում է այսօրվա մրցակցության ասիմետրիկ (անհամաչափ) բնույթը, քանի որ աշխարհաքաղաքական դերակատարները միմյանց դեմ կիրառում են տարբեր որակի «սպառազինություններ», եթե պայմանականորեն այդպես անվանենք վերոնշյալ ռեսուրսները։

«Սառը պատերազմ-2»-ի դերակատարները և հակամարտության ասիմետրիկ բնույթը. Չնայած այլընտրանքային ռազմաքաղաքական դաշինքների բացակայությանը, այսօր ուրվագծվում են այն աշխարհաքաղաքական-քաղաքակրթական միավորները, որոնք մտահոգված լինելով իրենց ինքնիշխանության պահպանման խնդիրներով՝ միևնույն ժամանակ ունեն անհրաժեշտ ռեսուրսներ և քաղաքական կամք (ինչը նույնպես կարևորագույն ռեսուրս է) ամերիկյան էքսպանսիային դիմակայելու համար։ Գլոբալ հարթությունում նման միավորների կարգավիճակ ունեն Չինաստանը և Ռուսաստանը, Իսլամական աշխարհը և վերապահումներով՝ մայրցամաքային Եվրոպան ու լատինաամերիկյան որոշ երկրների համախումբը։ Պետք է արձանագրել, որ սկզբնական փուլում այդ դերակատարների դիմադրությունն ամերիկյան ազդեցությանը կրում էր ավելի շուտ «քաղաքացիական անհնազանդության» տեսք։ Սակայն սեփական «կայացմանը» զուգահեռ՝ նրանց հարաբերությունները ԱՄՆ-ի հետ (իսկ որոշակի ոլորտներում՝ նաև միմյանց նկատմամբ) աստիճանաբար նմանվում են նրան, ինչը գոյություն ուներ Առաջին ՍՊ-ի տարիներին, այսինքն, ընթանում են՝ քաղաքական-դիվանագիտական ակտիվ խուսանավումներ, տնտեսական սուր մրցակցություն, տեղեկատվական (քարոզչական, հոգեբանական), երբեմն՝ քաղաքակրթական բախումների մակարդակով, պատերազմներ, միջամտություն մրցակցի ներքաղաքական խնդիրներին, կոշտ, ուժային պայքար հատուկ ծառայությունների ոլորտում,

անուղղակի ռազմական առճակատում, այսպես կոչված, «լոկալ» կամ «փոքր ինտենսիվության» պատերազմներում, որոնց շարքին են դասվում հակամարտությունները Մերձավոր և Միջին Արևելքում և գործընթացներն Աֆղանստանում:

Վերոնշյալի համատեքստում դիտարկենք ԱՄՆ-ՉԺՀ սկզբունքային և ռազմավարական բնույթ կրող մրցակցությունը, քանի որ «սեղանին է դրված» քաղաքական և տնտեսական առաջատարության խնդիրը ոչ միայն Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանում, այլև գլոբալ հարթությունում: Հատկանշական է, որ այդ տերությունների հարաբերությունները, չնայած իրենց «սառըպատերազմյան բնույթին», ամենականոնակարգվածն են: Դրանք ինչ-որ առումով հիշեցնում են ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունները նախորդ դարի 70-ականներին, երբ վերջիններիս ռազմական հնարավորությունները հավասարակշռված էին: Նման իրավիճակը պայմանավորված է հետևյալով. չնայած նրան, որ ռազմական ներուժի և ՀՆԱ պարամետրերով Չինաստանը զգալիորեն զիջում է ԱՄՆ-ին, սակայն տիրապետում է հսկայական արդյունաբերական և մարդկային ռեսուրսների, իսկ նրա պետական և հանրային համակարգն առաջնորդվում է հստակ գաղափարախոսությամբ: Այդ առումով ՉԺՀ-ն նույնպես գերտերություն է, այն կարողանում է արդյունավետ և ասիմետրիկ մրցակցել Միացյալ Նահանգների հետ: Ուժերի ասիմետրիկ հավասարակշռությունն արդեն բնորոշ է նաև ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններին: Վերջինիս ՀՆԱ-ն բազմապատիկ զիջում է ամերիկյանին, սակայն միջուկային ուժերի հարաբերական պարիտետով, իր հսկայական տարածքով (որը կարևորագույն աշխարհաքաղաքական չափանիշ է), ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների պաշարներով (որոշ գնահատականներով՝ վերահսկում է համաշխարհայինի 20-30%-ը) այդ տերությունը նույնպես հանդիսանում է խոշոր աշխարհաքաղաքական դերակատար: Հատկանշական է, որ Ռուսաստանի բնական ռեսուրսները բավարար դարձան ՍՊ-ի դերակատար լինելու համար միայն պետական համակարգի վերականգնման և ուրույն գաղափարախոսական դրույթներ ձևավորելուց հետո (մինչ այդ Ռուսաստանի դերակատարումը սահմանափակվում էր սեփական ինքնիշխանությունը պահպանելու հարցերով):

Թերևս ամենադրամատիկ ձևով են զարգանում ԱՄՆ-Իսլամական աշխարհ հարաբերությունները, որոնք ընթանում են հակաահաբեկչական ասիմետրիկ պատերազմի կանոններով: Սակայն այդ ոլորտում առաջին պլան են մղվել ոչ այնքան ահաբեկչական կազմակերպությունները (որոնց գործունեությունն Իրաքում ստիպում է ամերիկացիներին նահանջել), որքան Իրանը: Այդ տարածաշրջանային տերությունը, ունենալով քաղաքակրթական ավանդույթներ, ազգային-կրոնական գաղափարախոսություն և էներգետիկ ռեսուրսներ, արագորեն վերափոխվում է ասիմետրիկ գործող գլոբալ նշանակության դերակատարի: ԱՄՆ-Իրան սառը պատերազմը մղվում է գլխավորապես գաղափարախոսական և աշխարհատնտեսական հարթություններում:

Արդի բազմաբևեռ ՍՊ-ում յուրահատուկ դիրք է գրավում մայրցամաքային Եվրոպան, որի առաջատարներ Գերմանիան և Ֆրանսիան Առաջին ՍՊ-ի ավարտից հետո փորձում են դուրս գալ ամերիկյան ազդեցության գոտուց և վարել ինքնուրույն քաղաքականություն: Հատկանշական է, որ Եվրամիության ձևաչափն այդ տերությունների համար միաժամանակ և՛ լիարժեք աշխարհաքաղաքական միավորի վերափոխվելու հնարավորություն է, և՛ յուրովի «զսպաշապիկ», քանի որ այդ ձևաչափի միջոցով ԱՄՆ-ը կարողանում է իրեն հարող եվրոպական պետությունների միջոցով իրագործել իրեն շահավետ ծրագրերը: Հյուսիսատլանտյան և եվրակենտրոն աշխարհաքաղաքական հայեցակարգերին բնորոշ հակասությունները հանգեցնում են նրան, որ ԱՄՆ-Եվրոպա հարաբերություններում արդեն նշմարվում են «սառըպատերազմյան» նախանշանները, որոնք իրենց զգալ են տալիս տեղեկատվական և տնտեսական հարթություններում:

Ուշադրության արժանի են նաև Լատինական Ամերիկայում ընթացող գործընթացները, որոնց պատմական արմատները տանում են դեպի իսպանական և անգլոսաքսոնյան քաղաքակրթությունների հակամարտությունն ու լատինաամերիկյան հոգեկերտվածքին բնորոշ ազգային-ազատագրական, իսկ հետագայում՝ «ձախ» կողմնորոշում ունեցող շարժումները: «Լատինաամերիկյան» սառը պատերազմն ընթանում է ԱՄՆ առաջին «կայսերական» հայեցակարգի՝ Մոնրոյի դոկտրինի համատեքստում: Որպես նոր երանգ կարելի է համարել նախկին քաղաքակրթական մրցակցության յուրահատուկ վերափոխումը և տեղափոխումը

բուն Միացյալ Նահանգներ, որտեղ անգլալեզու և իսպանալեզու հատվածների առկայությունը վերաճում է ժողովրդագրական լուրջ հիմնախնդրի. տեսանելի ապագայում «լատինոսները» կարող են մեծամասնություն կազմել ԱՄՆ-ում, ինչը նույնպես կարելի է դիտարկել որպես ասիմետրիկ մարտահրավեր այդ տերությանը: Կատարված հետազոտությունների արդյունքում, պետք է փաստել, որ արդի բազմաբևեռ և ասիմետրիկ սառը պատերազմը նախնական փուլում է: ԱՄՆ հավաքական ռեսուրսների հարաբերական նվազմանը և նրա մրցակիցների հզորացմանը զուգահեռ՝ այդ «սառը» հակամարտությունը սաստկանալու միտումներ է ցուցաբերելու: Միևնույն ժամանակ, լիարժեք բազմաբևեռ համակարգի ձևավորումը կարող է հանգեցնել նաև այսօր ԱՄՆ-ի դեմ պայքարում համագործակցող դերակատարների շահերի բախմանը: Հաշվի առնելով միջուկային զենքի տիրաժավորումը տարբեր երկրներում՝ նման իրադրության վերահսկումը և «լիցքաթափման» ռազմավարության իրագործումը, ինչպես դա կատարվեց Առաջին ՍՊ-ի դարաշրջանում, անհամեմատ ավելի բարդ են լինելու: Այս ամենը ստիպելու է հիմնական դերակատարներին վերիմաստավորել «կոլեկտիվ անվտանգության» վերաբերյալ տարածաշրջանային թեզերը՝ փորձելով այդ հասկացությունները տեղափոխել և «հարմարեցնել» գլոբալ քաղաքական հարթությունում: Նման է նաև նրան, որ այսօր քաղաքական-փորձագիտական հանրությունը դեռևս գտնվում է «սցենարային» մտածելակերպի ստերեոտիպերի շրջանակներում, մինչդեռ նման մեթոդաբանությունը, թերևս, չի կարող արդյունավետ լինել սպասվող իրողություններում:

Հետազոտական աշխատանքի նպատակը աշակերտների կոմպետենցիաների զարգացմանը նպաստելն է, արժեքավոր և նպաստավոր լրացուցիչ արդյունքների ապահովելը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա/ Մասնագիտական գրականություն

1. Orwell, «You and the Atomic Bomb», Tribune, 19 October 1945:
2. Orwell, George, The Observer, 10 March 1946:
3. Акопян А.Р. Холодная война как социально-политический феномен. Социальные проблемы 2008, № 2:
4. Арнольд Дж., Берт Дж, Дадли У. Пламя "холодной войны": Победы, которых не было, Под ред. Питера Цуроса (англ.), русск., пер. Ю.Яблокова. М., АСТ, Люкс, 2004:
5. Византийское Наследство: Советско-турецкие территориальные проблемы на Потсдамской конференции, Статья:
6. Вторая мировая война. Черчилль У. Сокр. пер. с англ. Кн. третья, т. 5-6. М 1991:
7. Ильинский И. М. Холодная война: новый этап: Знание. Понимание. Умение. 2015. № 3:
8. Интервью И. В. Сталина газете «Правда» о речи Черчилля в Фултоне 1946:
9. Лавренов С.Я., Попов И.М. Советский Союз в локальных войнах и конфликтах. М., 2003:
10. Мюнхенская речь Владимира Путина, 2007:
11. Начало Холодной войны. Доктрина Трумэна. План Маршалла, Статья:
12. Нежинский Л. Н., Челышев И. А. Доктринальные основы советской внешней политики в годы "холодной войны" // Советская внешняя политика в годы «холодной войны» (1945 – 1985 гг.). Новое прочтение / Отв. ред. Л. Н. Нежинский. М., Международные отношения, 1995:
13. Орлов А. С., Георгиев В. А. История России с древнейших времен до наших дней. Учебник. М. «ПБОЮЛ Л. В. Рожников», 2000:
14. Петер Швейцер, «Победа», Роль тайной стратегии администрации США в распаде Советского Союза и социалистического лагеря, Минск, 1995:
15. Пихоя Р. Г. Советский Союз: история власти. 1945-1991. Новосибирск: Сибирский хронограф, 2000:
16. Речь Йозефа Геббельса «2000 год»:
17. Самюэль Хантингтон, Столкновение цивилизаций, 1996:
18. Страницы истории, Начало «Холодной войны», Статья:
19. Тимофеев Дмитрий Предчувствие холодной войны. Старые признаки и геополитические реалии // Политический журнал 2005, №2:
20. Толковый словарь Ожегова. С.И. Ожегов, Н.Ю. Шведова. 1949-1992:
21. Холодная война: В 2 т. (Военная история Российского государства / под ред. В.А. Золотарева) М.,ИНЭС, РУБИН, 2014. Т. 1: Противостояние двух сверхдержав / Путилин Б.Г., Золотарев В.А., Т. 2: От Потсдама до Мальты / Илиевский Н.В:

բ/ Համացանցային կայքեր

1. http://reich-erwacht.livejournal.com
2. http://sheba.spb.ru
3. http://so-l.ru/news
4. http://vizantarm.am
5. http://www.avtoref.mgou.ru
6. http://www.coldwar.ru
7. http://www.kommersant.ru
8. http://www.usinfo,ru
9. https://ru.wikipedia.org
10. https://www.youtube.com